

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՐԵՅ ԱՔԲԱՐԻ ՇԱՀՓԱՐ  
ԼԱՐԵՍՏԱՆՅԻՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԾԻՍԱԿԱՐԳԸ ԵՎ  
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԸ  
Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ  
պատմական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

---

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ  
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

САРЕХ ШАКПАР

СЕМЕЙНАЯ ОБРЯДНОСТЬ И НАРОДНЫЕ  
ВЕРОВАНИЯ ЛАРИСТАНЦЕВ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени  
кандидата исторических наук по  
специальности 07.00.04 "Этнография"

ЕРЕВАН-2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության  
ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ պ.գ.թ., Ս. Գ. Հոբոսյան  
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆ. Ռ.Ա. Նահապետյան  
պ.գ.թ. Թ.Ի. Ամրյան

Առաջատար կազմակերպություն՝ Մարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, հայոց  
ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան:

Պաշտպանությունը կայանալու է 2017թ. հունվարի 26-ին, ժ. 14:00-ին ՀՀ ԳԱԱ

Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 007 Հնագիտության և  
ազգագրության մասնագիտական խորհրդում (հասցեն՝ Երևան-0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության  
ինստիտուտի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2016թ. դեկտեմբերի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար  
պատմական գիտությունների թեկնածու

Հ. Ա. Մելքոնյան

-----  
Тема диссертации утверждена на ученом совете Института археологии и этнографии  
Национальной академии наук Республики Армения

Научный руководитель; к.и.н., Обоян

Официальные оппоненты; д.и.н. проф. Р.А. Напетян

К.и.н. Т.И. Амрян

Ведущая организация: Мемориальный комплекс Сардарapatской битвы, национальный  
музей этнографии Армении и истории освободительной борьбы.

Защита состоится 26 января 2017г. в 14:00 часов, на заседании специализированного совета  
007 ВАК по археологии и этнографии, при Институте археологии и этнографии НАН РА  
(адрес: Ереван-0025, ул Чаренца 15)

Автореферат разослан 26-го декабря 2016г.

Ученый секретарь специализированного совета

к.и.н. У.А. Мелконян

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Լարեստանի տարածքը բավականին ընդարձակ է, ու չնայած նրան, որ բազմաթիվ պատմական իրադարձություններ են տեղի ունեցել այս տարածաշրջանում, այն իր արժեքավոր մշակույթը բավականին անաղարտ է պահել: Այստեղի դրական առանձնահատկություններից մեկն այն է, որ տարբեր ցեղերի գաղթը դեպի Լարեստան այնքան էլ չի ազդել տեղի մշակույթի վրա, և այժմ օտար մշակույթների տարրեր գրեթե չեն նկատվում: Սակայն Լարեստանի մշակույթը, ավանդույթներն ու ծեսերն այսօր արդեն ամբողջությամբ պահպանված չեն: Ներկայում հասարակության արագ զարգացման, տեխնոլոգիաների ազդեցության ու տարբեր քաղաքների ու գյուղերի միջև շփումների հեշտացման արդյունքում ապրելակերպի և ծիսակատարությունների բազմաթիվ տարրեր փոփոխության են ենթարկվում: Ավանդական ապրելակերպի, մշակույթի և հատկապես ծեսերի ու հավատալիքների մասին կատարվող ուսումնասիրությունն այսօր շատ կարևոր է, քանի որ դա երաշխիք է մշակույթի այս ոլորտը փոխանցելու հետագա սերունդներին և հետագայում ևս այս ժառանգության պահպանման:

**Հետազոտության նպատակն ու խնդիրները:** Հիմնական խոչընդոտներից մեկն այս տարածաշրջանի ավանդույթների ու ծեսերի ուսումնասիրության գործում վաղ շրջանի պատմական աղբյուրներում դրանց նկարագրության բացակայությունն է: Աշխատանքի նպատակն է հավաքել ու ամբողջացնել Լարեստանի ավանդույթներն ու ծեսերը: Խնդիրներն են ի մի բերել այն տեղեկությունները որոնք դեռևս 1. պահպանվել են արդի ժամանակաշրջանում, 2. հնարավորություն կա դրանք ի հայտ բերել մեծահասակների հիշողությունների շնորհիվ, 3. մասնագիտական գրականությունից և 4. գրավոր աղբյուրներից: Տվյալ ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հետագայում ևս այս աշխատանքը շարունակելու, լրացնելու և վերջապես ամբողջացնելու:

**Աշխատանքի գիտական նորույթը:** Ներկայացված առենախոսության թեման՝ «Լարեստանցիների ընտանեկան ծիսակարգը և ժողովրդական հավատալիքները» առաջին անգամ է ներկայացվում որպես համակողմանի գիտահետազոտական աշխատանք: Մինչ այդ Լարեստանի ընտանեկան ծեսերն ու տոները ամբողջությամբ չեն ներկայացվել: Այս ուսումնասիրությունը կարևորվում է որպես ազգագրական հետազոտություն և կարող է միաժամանակ պիտանի լինել մշակութաբանության ու սոցիոլոգիական տեսակետներին:

**Ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքը:** Լարեստանի բնակավայրի կենսակերպի, ծեսերի ու տոների մասին ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել աղբյուրագիտական նյութերը, հեղինակի գրի առած դաշտային նյութերը և տարբեր հեղինակների ազգագրական և այլ բնույթի աշխատությունները: Լարեստանի հնագույն մշակույթի, ավանդույթների ու բարքերի վերաբերյալ ինֆորմացիա են պարունակում Ահմադ Էդթեդարիի «Լարեսթան-ե քոհան վա ֆարհանգ-ե Լարեսթանի», Մոհամադ Նուր Խազարիի «Գոզարի բար ֆարհանգ-ե մարդում-ե Էվլազ (Լարեսթան)», Մոհամադ Շարիֆ Քեմալիի «Մարդոմշենասի-յե Էվլազ», Մոսթաֆա Ամիրիի «Միմա-յե դիյար-ե Խոնց», աշխատանքները, ինչպես նաև հատուկ թողարկված «Լարշենասի», «Բահար-ե Յիշվար» ամսագրերը և «Մայե-յե համասյե» շաբաթաթերթը: Սույն աշխատության մեջ փորձ է արվել ներկայացնել Լարեստանի շիա բնակչության ընտանեկան սովորույթներն ու բարքերը:

**Աշխատանքի կառուցվածքը և բովանդակությունը:** Առենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից:

## ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ տրվում է Լարեստանի վերաբերյալ աշխարհագրական և պատմական համառոտ ակնարկ, շրջանի առանձնահատկությունները հատկապես ժողովրդագրական տեսանկյունից: Ներկայացվում են ուսումնասիրության կատարման մեթոդն, Լարեստանի ընտանեկան հասարակական կառուցվածքը, նշվում են գրական այն աղբյուրները, որոնք օգտագործվել են աշխատանքում:

### ԳԼՈՒԽ 1. ՀԱՐՄԱՆՔ ԵՎ ԾՆՈՒՆՆ

Ամուսնական արարողությունները սկսվում էին աղջիկ ուզելուց, դրան հաջորդում էր նշանադրությունը, իսկ մինչև ամուսնություն ընկած ժամանակաշրջանում, որը կարող էր տևել մինչև երկու տարի, տեղի էին ունենում տարբեր կրոնական ու ավանդական ծիսակարգեր:

**Խնամախսության արարողությունը** Հին ժամանակներում ամուսնությունը կատարվում էր ընտանեկան կապերի կամ հարևան ու բարեկամ կանանց միջոցով: Նրանք էին բաղնիքներում, աղբյուրների կամ ջրամբարների մոտ համապատասխան աղջիկ գտնում իրենց կամ բարեկամի տղայի համար: Սովորաբար ամուսնությունը կատարվում էր երկու եղբոր երեխաների՝ աղջկա և տղայի միջև, և համոզված էին, որ այս կապը հաստատված է բարձրալի կողմից: Աղջիկ ուզելու գնում էին կանայք: Աղջկա ընտանիքը միշտ պատրաստ էր հյուրեր ընդունելու և հյուրասիրելու: Երբ տղայի կողմն աղջկան հավանում էր, սպասում էին աղջկա հոր պատասխանին, որը հրապարակվում էր մի քանի օրից: Աղջիկներն ամուսնանում էին 12-ից 17 տարեկաում: Նրանք իրավունք չունեին իրենց փեսացուին տեսնելու մինչև ամուսնական գիշերը: Աղջկա ձեռքը խնդրելու արարողությունը կատարում են տղամարդիկ, չնայած շատ գյուղերում կանայք ևս մասնակցում են, բայց նստում են առանձին սենյակներում: Արարողության վերջում որոշվում է կնոջը տրվող դրամական գումարի չափը, կաթի գինը, ամուսնական արարողության համար ծախսվելիք գումարի չափը, նշանադրության ու հարսանիքի օրը:

**Կնոջը տրվող դրամական գումարի չափը և կաթի գինը** մոտավորապես 5-10 ֆաթիալի շահի աշրաֆի և 24 նոխուդի կամ մսխալի էր: Այն երբեմն հասնում էր մինչև 25 աշրաֆի: Գումարի չափը պետք է կենտ լիներ, հակառակ դեպքում հավատացած էին, որ ամուսինը կնոջից բացի ևս մի կին կերի տուն: Նախկինում գումարի չափը 1000-ից մինչև 5000 թուրման էր: Աղջկա ընտանիքին տրվող կաթի գումարը ծախսվում է օժիտի համար:

**Նշանադրություն** Նշանադրությունը տեղի է ունենում կամ աղջկա, կամ էլ տեղի անվանի մոլլաներից մեկի տանը: Որոշ գյուղերում մոլլային են տանում հարսի տուն: Մոլլան կարգը կարդում է արաբերեն, երեք անգամ կանանց սրահում, մեկ անգամ՝ տղամարդկանց, որից հետո հարսն ու փեսան պետք է իրենց համաձայնությունը տան: Մոլլան արարողության ժամանակ բռնում է փեսայի ձեռքն ու պահանջում կրկնել իր ամեն բառը: Դրական պատասխանից հետո նշանադրության մասնակիցները, Ալլահին փառք տալով, սկսում են խրախճանքը: Գետնին գորգ են փռում, վրան՝ սփռոց, դնում են ոտնակներով հայելի, քար, երկաթե մետր, Ղուրան և ջրիորից բերված մի սափոր ջուր: Բոլորը մոզական նշանակություն ունեցող բարբեր և չարխափան առարկաներ են, ինչպես նաև աղջկա զլիխի գցվող կանաչ քողը: Հարսի բերանը շաքար էին դնում, ոտքերի տակ՝ Ղուրան, ձեռքը կողպեք էին տալիս, որը կողպում էին ու մինչև ամուսնական առաջին գիշերը չէին բացում: **Նշանադրության և հարսանիքի միջև ընկած տոները** պարտադիր կերպով նշվում են: Այս տոների ժամանակ փեսայի ընտանիքը կերակուրներ, քաղցրավենիք ու հագուստ է ուղարկում հարսնացուի համար: **Հարսանիքի օրվա ընտրությունը** Երկու ընտանիքները միասին գնում են մի հարգված սեյլիդի տուն: Վերջինս Ղուրանի և այլ սուրբ գրքերի օգնությամբ ընտրում է ամսվա ամենահաջող օրերը, որոնցից

մեկն էլ դառնում է ապագա ամուսինների հարսանիքի օրը: Որոշելուց հետո հրավիրում են հյուրերին: **Պատրաստություններ հարսանիքի համար** Նախկինում հարսանիքի օրվան սկսում էին նախապատրաստվելը մեկ շաբաթ առաջ: Երկու ընտանիքների տան դռները բաց էին լինում բոլորի առաջ, ովքեր գալիս էին կամ օգնելու, կամ պարզելու՝ իրենք հրավիրված են, թե՛ ոչ: **Հինայի օրը** Հարսանեկան ծեսի առաջին պաշտոնական երեկոն կոչվում է *հինայի երեկո*: Փեսայի ընտանիքի կողմից հարսի տուն է տարվում երեք սկուտեղ չոր հինա, երեք սկուտեղ արդեն պատրաստի հինա, գունավոր կտորներ, որոնք անհրաժեշտ են հինան հարսի և փեսայի ձեռքերին կապելու համար: Հարսին նվեր են ուղարկում նաև զանազան հագուստներ, որոնց մեջ գերակշռում է կանաչ գույնը՝ որպես հաջողության ու երջանկության գույն: Լարեստանում կան կանայք, որ կոչվում են *«լալա բիբի»*: Նրանք հարսին ուղեկցում են ամենուր՝ մինչև ամուսնական գիշերը: Այս կանայք են զարդարում հարսին, նրա ձեռքերը հինա դնում, բաղնիք տանում ու խորհուրդներ տալիս: **Մկուտեղ տանելը** Լարում *«բացահայտ հինայի»* հաջորդ օրը փեսայի ընտանիքը երկու մեծ սկուտեղ խորուշ դեյմե է պատրաստում ու կեսօրին ուղարկում հարսի տուն: Այս կերակուրը հյուրասիրում են բոլոր ներկա հյուրերին, իսկ նրանց համար, ովքեր այդ պահին հարսի տանը չեն, ուղարկում են նրանց տները: **Օձիտը** Լարեստանում աղջիկներին տալիս են շիաբնակ ընտանիքները: **Փեսայի գլուխը սամբելը** Լարի շրջակա բնակավայրերում, հարսանիքի օրվա կեսօրին տեղի է ունենում. փեսան հեծնում է ձին, հարևանների ու բարեկամների ուղեկցությամբ գնում է իր բնակավայրից դուրս՝ մի ջրամբարի կամ ջրհորի մոտ: Այստեղ սկսվում է երգ ու պարը, որի ընթացքում վարսավիրը սամբում է տղայի գլուխը, այնուհետև փոխում են նրա հագուստը: Երբ փեսան վերադառնում է, գլուղ նրան նվերներ են տալիս և աչքերին տուրմա քսում:

**Հարսանիքը** Երբ փեսան պատրաստ է, նրան երգ ու պարով ուղեկցում են հարսի տուն, որտեղ նրա ոտքերի տակ աղջկա հայրը ոչխար է մատող անում, իսկ փեսան, անցնելով թափվող արյան միջով, մտնում է հարսի տուն: Փեսան հարսին գտնում է պառոթին նստած՝ գլուխն ու դեմքը ծածկած սպիտակ քողով: Որպեսզի նա կարողանա տեսնել իր ապագա կնոջ դեմքը, պետք է ոսկե իր, ժամացույց կամ վզնոց նվիրի նրան: Հարսի գիրկը տղա երեխա են նստեցնում, որպեսզի տղա ունենա: Սրանից հետո հարսը հրաժեշտ է տալիս ծնողներին ու հարազատներին, որոնք նրան դռնից դուրս են թողնում՝ Ղուրանը գլխավերևում պահելով, լացով ու տարբեր բարեմաղթանքներով: Երբ հարսը հասնում է փեսայի տուն, ոչխար են մատող անում նորապսակների ոտքերի տակ: Այստեղ փեսան հարսին նվեր է տալիս, ու հայտարարում, որ այսուհետ տունն ամեն ինչով պատկանում է երկուսին հավասարապես: Որոշ շրջաններում ուղտ կամ ոչխար են նվիրում, իսկ ներկայումս խոստանում են այցելություն դեպի Մեքքա, Քերբելա կամ Մաշհադ: Երբ հյուրերը հեռանում են, հարսին ուղեկցում են իր սենյակը, որի դռան փեսայի մայրը հալվա է դնում: Երբեմն հարսը հալվայով իր սենյակի դռանը գրում *«Ալլահ, ով տեր, բարություն»* բառերը: Լարում ամուսնական գիշերվա հաջորդ առավոտյան հարսին տանում են բաղնիք: Այստեղ է գալիս նաև հարսի մայրը: Եթե առաջին գիշերը փեսան հարսին չի հավանում, հաջորդ առավոտյան հալվայով նրան տանում են իր հոր տուն: **Ջոքանչի ձեռքը համբուրելը** Եթե փեսան հավանում է իր կնոջը, առավոտյան գնում է աղջկա ընտանիքի տուն՝ զոքանչի ձեռքը համբուրելու: Աղջկա մայրը կոճապղպեղով (ինքիրով) հալվա, ավանդական հաց ու աղջկա հագուստներով ճամպուկն է ուղարկում փեսայի տուն: **Հարսի հյուրընկալությունը** **հայրական օջախ** հարսանիքից քառասուն օր հետո է լինում: Հրավիրվում են նաև փեսային, նրա ընտանիքի անդամներին ու մոտ ազգականներին: Ամուսնությունն ուղեկցվում էր կրոնական բնույթի բազմապիսի գործողություններով. բոլորի նպատակը մեկն էր՝ բազմաթիվ ժառանգներ ունենալ, բարեկեցություն և խաղաղություն ապահովել ընտանիքում, անվտանգություն տարատեսակ չար ուժերից: Ժամանակակից արա-

րողություններում հատկապես առատ են նախնիների և բնության պաշտամունքի վերապրուկները, նշանակությունը չի կորցրել դեմոնոլոգիան, հատկապես տարածված է չար աչքի «պրոֆիլակտիկան»:

**Հղիություն, ծննդաբերություն և դրան հաջորդող ծխակատարությունները**  
Լարեստանում ամուսնության արարողությունից հետո, փեսայի ընտանիքում հարսի հղիության լուրին շուտ են սպասում, ու եթե այն ձգձգվում է մինչև երկու տարի, ամուսինը երկրորդ կին է բերում: Հնում մինչև կինը չէր հղիանում, չպետք է ամուսնու հետ տնից դուրս գար: Այս կապակցությամբ նույնիսկ թևավոր խոսք կա. «քանի դեռ կինը երեխա չունի, օտար է»: Որոշ բնակավայրերում եթե կինը երեք տարի երեխա չի ունենում, նրա անունը գրանցում են գյուղի չբեր կանանց ցուցակում: Ամուսնալուծությունը ամոթալի էին համարում, բայց երկրորդ կնոջ տուն բերելը՝ ոչ: **Հղի կնոջ սննդի պահանջը** Լար քաղաքում ընդունված է, որ կնոջ հղիության երրորդ ամսում նրա մայրը ընտիր ուտելիղեններ պետք է պատրաստի և ուղարկի: Մա կարևոր է, հատկապես երբ առաջնեկը պետք է ծնվի: Հղի կնոջ սննդի պահանջով տարեց ու փորձառու կանայք փորձում են կռահել երեխայի սեռը: Եթե կինը շատ խնձոր ու քաղցրեղեն է ուտում, ապա հավատացած են, որ նրա երեխան տղա է լինելու, իսկ եթե հակված է թթու ուտելիքների՝ աղջիկ: **Ղուրան կախելը պարանոցից** Լարեստանի շիաբնակ շրջաններում կնոջ հղիության հինգերորդ ամսում, երբ երեխան շարժվում է, ընդունված է մի ծխակարգ անցկացնել, որը կոչվում է «Ղուրանը գցել պարանոցից»: Մրան մասնակցում են բոլոր հարևաններն ու ցեղակիցները, որոնք Ղուրան են կարդում ու տարբեր աղոթքներ անում ապագա մոր ու երեխայի բարեկեցության համար: Այստեղ հյուրասիրության ողջ պատրաստությունը տեսնում է աղջկա մայրը: Նախկինում, տատը, մորեղբայրը կամ սկեսուրը հարսի պարանոցից մի թալիսման էր կախում, որը պետք է նրան ու երեխային պաշտպաներ հղիության հինգից մինչև իններորդ ամիսների ընթացքում: Այս թալիսմանի մեջ դրված էր Ղուրանից մի հատված, ուրց և չար աչքից պաշտպանող իրեր: Թալիսման պատրաստում էր աղջկա մայրը: Ներկայում մայրը իր հղի աղջկան ոսկե շղթա է նվիրում շրջանաձև կախազարդով, որի վրա աղոթք է գրված: **Նորածնի օժիտը** Կնոջ հղիության յոթերորդ ամսում նրա մայրը երեխայի օժիտն է պատրաստում՝ օրորոց, բարուրի կտորներ, շորեր, աչքի ուլունք, այլ պաշտպանիչ թալիսմաններ, երեխային կերակրելու սպասք, յուղ և այլն: **Ծննդաբերությունը** Նախկինում կինը ծննդաբերում էր տանը, աղյուսների վրա, միայն թե սկզբում հատակին մեխ էին խփում չար ոգիներից՝ ալերից պաշտպանելու նպատակով: Եթե ծննդաբերությունը դժվար էր ընթանում, մեկին ուղարկում էին կտուր, որպեսզի այնտեղից աղոթք ասեր: Նրան միանում էր նաև ծննդկանի մայրը: Նրանք դիմում էին ասոր ֆաթիմային, որպեսզի օգնի: Ծննդաբերող կնոջը ու մոր մարմինը բարեհաջող անջատի երեխայի մամուսից: Կան գյուղեր, որտեղ տղա երեխա ծնվելիս՝ երկու հատ ոչխար էին մատաղ անում, իսկ աղջկա դեպքում՝ մեկ հատ: **Ալերից պաշտպանվելու ձևերը** Երեխան ծնվելուց հետո մորը տեղափոխում էին սենյակ և դեմքին սև նյութքսում: Մրանով ծննդկանի այտերին, ճակատին, ձեռքերին ու ոտքերին, ինչպես նաև պատին՝ նրա գլխավերևում խաչ էին գծում: Այնուհետև, ուրվված սև ու սպիտակ, կամ կանաչ ու սպիտակ թելերով կապում էին նորածնի ու մոր աջ բազուկն ու ձախ ոտքը: Մորն ու մանկանը ալերից պաշտպանելու մեկ այլ եղանակ էր նրանց շուրջը փայտով շրջան գծելն ու կանանց միաժամանակյա երկխոսությունը, որում տարբեր սրբերի անուններ էին հիշատակվում: Այնուհետև այդ փայտը դնում էին ծննդկանի բարձի տակ: Ալերից մորն ու երեխային պաշտպանում էր նաև ձիու պայտը, մկրատը, կանաչ գույնի կտորը, որոնք ևս դնում էին կնոջ գլխի տակ: Երեխայի համար վտանգավոր են բոլոր չար ոգիները՝ և՛ ավաստին, և՛ աջենան, և՛ դևը: Աջենան ամենուրեք թափառում է մարդու, կովի, շան, ավանակի, կատվի կերպարանքով: Նա կարող այնպես վնասել կնոջը, որ նրա

զավակները չապրեն: Մինչև քառասունքը լրանալը երբեք երեխային մենակ չէին թողնում անեյակում, այնտեղ պարտադիր կարգով Ղուրան ու աղոթած ջուր էին դնում:

**Տեղական բուժամփոջոցներն ու ծննդկանի օրակարգը** Ծննդաբերությունից հետո, մինչև կնոջ բաղնիք գնալը՝ յոթերորդ կամ տասներորդ օրը, տատնայրն ամեն առավոտ ու երեկո գալիս է ծննդկանի տուն: Առաջին օրը Մեքքայից բերած *մուսհոն*, յուզն ու ջուրը խառնած խմեցնում են ծննդկանին, որպեսզի շուտ բուժվեն վերքերը: Երեխայի ծնվելուց անմիջապես հետո նրա քիմքին Քերբելայից բերված աղոթած հողով ու մեղրով խառնուրդ էին քսում, որպեսզի *դարդ ու ցավից* հեռու մնա: Ծննդկանին տալիս էին բրինձ, հավի միս, աբգուշթ, բրնձի այլուրի հավա, հավկիթ, լյարդ, խորոված ամբուկ: Երեխա չունեցող գույզին ջրամբարի տիղմից, խունկից ու շաքարից պատրաստված հավա էին տալիս: **Բաղնիք գնալու օրը** յոթ կամ տաս օր անցնելուց հետո նորածնին իր մոր հետ տանում են բաղնիք: Դրա նախորդ երեկոյան մի քանի բույսերից ու յուղից պատրաստած քուռքով պատում են մոր մարմինը: Այնուհետև նրան իմբիրով ու սև պղպեղով թեյ է հավի դեղնուցով, ծառի խժով ու շաքարով պատրաստած խառնուրդ են տալիս: Հաջորդ օրվա առավոտյան մոր ու մանկան բազուկին ու ոտքին կապած սև ու սպիտակ թելերը քանդում են, որոնք, բաղնիքից հետո կրկին կապում են: Այդ թելերը քառասունքի բաղնիքից հետո կապում են չիդիացող կանանց թևերին, որպեսզի երեխա ունենան: Որոշ վայրերում դամասկյան վարդով ու յոթ ուրիշ բույսերով թուրմ են պատրաստում և կնոջ բաղնիքից դուրս գալու պահին քառասուն անգամ լցնում նրա գլխին. դա խորհրդանշում է նրա մաքուր լինելը, երբեմն սոխ են դնում ոտքի տակ, որպեսզի սորորի ու հեռու վանի ավերին: Բաղնիքից հետո հյուրեր են ընդունում ու սկսվում է ճոխ հյուրասիրությունն ու նվերների հանձնումը: **Երեխայի անվանակոչությունը** Հնում երեխայի անունը ընտրելու համար թղթի վրա մի քանի անուն էին գրում և դնում Ղուրանի մեջ: Պատահականության սկզբունքով հաշվելով, դուրս եկած անունն էլ դառնում էր երեխայի անունը: Անունը երբեմն որոշում էին ընտանիքի տարեց անդամները, որոնք երեխային անվանում էին ի հիշատակ մահացած տատիկի կամ պապիկի: Եթե ընտանիքում տղա երեխա է ծնվում ու մահանում է, ու եթե նրանից հետո ծնված երեխան կրկին տղա է լինում, նրա անունը «Բեման» են դնում, այսինքն՝ «Մնա կամ Մնաց, Մնացական»: Իսկ եթե անընդհատ աղջիկներ երեխա է ծնվում նրա անունը «Բավական» են դնում: Եթե տղա երեխա է ծնվում, մուսուլմանների համար սուրբ համարվող մոհաբրամ և ռամադան ամիսներին, նրան այդ ամիսների անունով էլ կոչում են: Իսկ չար աչքից հեռու պահելու համար երեխային քնացնում են մաղի տակ ու նրան այդպես էլ կանչում են՝ «Ղոբբալ», այսինքն՝ *մաղ: Օրորոցի տակ* Կնոջ մայրը նախօրոք որոշակի քաղցր ու թթու ուտելիքներ է պատրաստում, մեծ սկուտեղի մեջ դասավորում ու դնում օրորոցի տակ, որը կոչվում է «զերբանե»: Երբ հյուր է գալիս տուն, նրան հյուրասիրում են այդ ուտելիքներով. քաղցր ուտելիքները նրա բերանը քաղցրացնելու համար են, իսկ թթու ուտելիքները՝ չար աչքից հեռու պահելու: **Այլ ծիսակատարություններ** Նորածին երեխային քառասուն օր մեկուսացնում են *օտար աչքից*, ու այն մարդկանցից, ովքեր բացասական էներգիա ունեն՝ երեխա էին կորցրել կամ էլ չարախոս են: Երեխայի քառասունքից հետո տանից դուրս հանելիս, նախ տանում են մոտակա սրբավայրերը, որտեղ նրա համար աղոթք են ասում: **Թղլատման արարողությունը** Իսլամական երկրներում թղլատումը շատ տարածված է՝ դիտարկվում է որպես մարգարեի թղլատում: Դա արվում է հաղորման կամ մասաալի տոների ժամանակ: Թղլատման նախօրյակին հարևանների և բարեկամների մասնակցությամբ մեծ տոնախմբություն են կազմակերպում, իսկ հաջորդ օրը բժիշկ են կանչում, ապա երեխաներին կապում են արմավենուց ու նրանց շուրջը սպիտակ կտորով ծածկում: Այնուհետև երեխաների բազուկներին Ղուրան են կապում, իսկ պարանոցներից աղոթքի մի հատված կախում: Բժիշկը, անցնելով սպիտակ կտորի հետևը, որտեղ որ գտնվում են

տղաները, թլպատում է նրանց, իսկ այդ ընթացքում հավաքված ծնողներն ու բարեկամները ուրախ բացականցություններով ոգևորում են նրանց: Ունևոր ծնողները իրենց երեխաներին տանում են որևէ սուրբ վայր, օրինակ՝ Մաշհադ, և այնտեղ են թլպատում: Երբեմն երեխաների մազերը մինչև թլպատելը չեն կտրում, իսկ հետո կտրված մազերի քաշով աղբաստներին ոսկի են բաժանում: **Մատաղն** արվում է երեխայի լույս աշխարհի գալու առաջին օրերին: Մատաղի խորհուրդը նորածին զավակին դժբախտությունից ու չարիքից հեռու պահելն է: Կենդանուն գոհաբերելուց հետո որոշակի աղոթքներ են ասվում, այնուհետև մորթված ոչխարի մսից *աբգուշտ* (խաշլամա) են պատրաստում, ոսկորները առանձնացնում են, թաղում են հողի մեջ, միսը բաժանում են մարդկանց: **Աղջիկ երեխաների ակննջ ծակելու** օրը նշվում է մեծ շուքով: Հրավիրվում են հարևաններին ու բարեկամներին, որոնք նվերներ են բերում երեխային, կամ ծնողներին: Արարողությունը իրականանցում են երեխայի ծնվելու տասներորդ օրը: **Ատամահատիկի** ծեսը կատարում են, երբ ծկթում է երեխայի առաջին ատամը: Եվված կերակուրի բաղադրիչներն են լոբին, սիսեռը, ձավարը և այլն: Որոշ գյուղերում բաղադրիչները վերցնում են հարևաններից, հետո՝ բաժանում մարդկանց: Երեխայի ծնողները երբեմն երեք ոչխար են մորթում: Նրանք էլ ափսեների մեջ են դնում իրենց նվերները, հետո միայն վերադարձնում տերերին:

## **ԳԼՈՒԽ 2. ՀՈՒՂԱՐԿՎԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԸ ԵՎ ԾԵՄԵՐԸ**

Շիա ու սուննի մուսուլմանների շրջանում առկա մշակութային ու ցեղային տարբերությունները հանդիսանում են այն մեծ հիմքը, որով էլ թաղման արարողակարգը տարբերվում է միմյանցից:

**Պատան** Լար քաղաքում անցկացվող թաղման արարողակարգը, որը հիմնականում բնակեցված է շիա մուսուլմաններով, որոշակիորեն տարբերվում է սուննիաբնակ շրջանների թաղման արարողակարգից, չնայած որ երկուսի մոտ էլ այն անցկացվում է ըստ իսլամի դրույթների: Մահից հետո հանգուցյալի մարմինը փաթաթում են սպիտակ *պատանով*: Այն չունի կարեր, բայց վրայի կապանների շնորհիվ կարելի է հանգուցյալի մարմինը ամուր փաթաթել: Իրանի մահմեդականների մեծ մասը պատանները ձեռք է բերում սուրբ համարվող Քերբելա, Մեքքա և այլ քաղաքներից: Տղամարդկանց պատանը կազմված է հինգ, իսկ կանանցը՝ յոթ կտորից: Մուսուլմանները մահացածին երկար չեն պահում տանը, իսկ անհրաժեշտության դեպքում նրան դնում են դեմքով դեպի դեբել՝ Մեքքայի ուղղությամբ: Երբ հավաքվում է հանգուցյալի ողջ բարեկամությունը, նրան դնում են պատգարակի վրա, դեմքին սրբիչ են գցում ու սնից դուրս տանում լողացնելու: Յուրաքանչյուր հավատացյալի բաղձանքն է յոթ հանգուցյալ լողացնելն ու յոթ երեխայի ծնունդ ընդունելը: Յուրաքանչյուր ոք պարտավոր է իր կյանքի ընթացքում իր վաստակած գումարով նախապես պատրաստի իր պատանն ու հագուստը. մահից հետո հագուստը պետք է հասնի իրեն լողացնողին: Պետք է մի քիչ դրամ էլ կուտակի իրեն լողացնողի համար, որպեսզի վերջինս թաղման առաջին գիշերը մնա գերեզմանոցում ու իր համար արիության աղոթք ասի: Լարում, ու հատկապես շիաբնակների շրջանում, բացի հանգուցյալին պատանավորելուց, նրա մատին ազաթե մատանի ու կրծքին էլ համրիչ են դնում՝ բերված Քերբելայից: Այս երկու իրերը հանգուցյալին պետք է պաշտպանեն դժոխքի կրակներից: **Թաղման արարողակարգը** Մարդու մահից հետո նրա մարմինը պարտադիր կարգով պետք է լողացնեն (եթե մարդ մահանում է պատերազմի դաշտում, կամ աստծո ճանապարհին, ապա նահատակ է համարվում և մարմինը լողացնելու կարիք չկա): Լողացնում են երեք անգամ: Սկզբում լվանում են աջ կողմը, հետո՝ ձախը: Երբ մարմինն արդեն մաքուր է, նրան այլևս չեն դիպչում: Հանգուցյալին սրբիչով փաթաթելուց հետո, գալիս է նրան պատաննելու ժամանակը: Նախ նրա ճակատին, հոնքերի մեջտեղի մասում,



քթին, կրծքավանդակին, ձեռքերի բուլժ մատերին ու ափերի մեջ Քերբելայից բերած սուրբ հող են քսում, որը նախօրոք լուծում են ջրում: Պատանը սովորաբար 2/5 մետր է լինում, իսկ գոյնն էլ՝ սպիտակ: Կանանց համար դեմքը ծածկող բոլոր է կիրառվում, իսկ տղամարդկանց համար՝ ընդհանուր շապիկ: Հնում հանգուցյալի աջ և ձախ կողմերում ձեռնափայտ էին դնում, որը նույնպես պատանավորում էին՝ մարմնին կապած: Լարում մարդիկ հավատում են, որ մահացածի մարմինը գերեզման իջեցնելուց հետո, սուրբ Ալին կանգնում է նրա գլխավերևում, ու եթե չլինեն այդ ձեռնափայտերը, հանգուցյալը չի կարողանա ցատկել ու ողջագուրվել նրա հետ: Ասում են, որ եթե մինչև գերեզմանատուն քառասուն հոգի իրար փոխարինելով տանեն պատգարակը, ապա մահացածը կընկնի դրախտ: Մինչև գերեզմանատուն հասնելը, պատգարակը երեք անգամ դնում են գետնին ու վերցնում, այսպիսով, հանգուցյալին սովորեցնում են իր նոր բնակարանի ճանապարհը: Այս ընթացքում երեք անգամ բարձրաձայն տալիս են Ալլահի անունը: **Գերեզմանի կառուցումը** Գերեզման փորելու կարգն իսլամում հետևյալն է. սկզբում հողը չափում են հանգուցյալի չափով, այնուհետև գերեզմանին զուգահեռ դեպի դեբել, հողի մի հատվածը հանում են, որպեսզի մարմինը լրիվ տեղավորվի ու ցեմենտի մի քանի բլոկներով, որոնց մի կողմը տաշում են, շարում են փոսը մինչև դիակի բարձրության չափով՝ հողը ամրացնելու նպատակով: Հնում աղյուսներ էին օգտագործում, որոնց քանակը հասնում էր մինչև քսանչորսի: **Դիակի տեղավորելը գերեզմանում** Հանգուցյալին գերեզման են ուղեկցում դեմքը ծածկած բրդյա կտորով, որը մարմինը փոսն իջեցնելուց հետո հանում են: Եթե հանգուցյալը կին է, միայն փոսի մեջ են երեսից հանում այդ կտորը՝ պայմանավորված կրոնով: Երբ մարմինն արդեն գերեզմանում է, այն պատկեցնում են թեք՝ աջ ձեռքին հենված, իսկ պատանի մի հատվածը բացում են, հանելով հանգուցյալի գլուխը, որպեսզի դեմքը շփվի հողի հետ: Այնուհետև մեկը գերեզմանի վերևում աղոթք է կարդում, իսկ ներքևում մի ուրիշը այդ աղոթքները բարձր ձայնով կրկնում է հանգուցյալի ականջին, որպեսզի նա նույնպես լսի դրանք: Հողով ծածկելուց ու գերեզմանաթումբը թրջելուց հետո, սկզբում տղամարդիկ, այնուհետև կանայք նստում են գետնին, ձեռքի մի մատը մտցնում են հողի մեջ ու աղոթք ասում, փոխանցելով այն հանգուցյալին: **Միակատարություն թաղումից հետո** Թաղման առաջին օրից մինչև երրորդ օրը գերեզմանաթմբի վրա կրակ են վառում ու մեկը այս երեք օրերի ընթացքում Ղուրան է կարդում: Առաջին գիշերը հանգուցյալի տանը ևս կրակ են վառում ու այն թախտի վրա, որտեղ սովորություն ուներ նստելու՝ սպիտակ սրբիչ են փռում, մի ամանի մեջ ջուր ու շաքար են լցնում, մեջը երեք հատ կանաչ տերև են գցում, ու դնում կրակի մոտ: Երբեմն մոտ հարազատները մինչև լույս մտնում են հանգուցյալի տանը ու Ղուրան կարդում: Ընտանիքին ցավակցողները գալիս են թաղման հաջորդ օրվանից: Դա տևում է մինչև յոթ օր: Հարազատներն իրենց պատրաստած ուտելիքներն ուղարկում են հանգուցյալի տուն կենտ թվով արկղերով, կաթսաներով կամ ափսեներով: Լարում տղամարդիկ կրկին գերեզման են գնում թաղման յոթերորդ օրը, կանայք՝ տասնհինգերորդ օրը: Եթե այս ընթացքում օրացույցով որևէ տոն է լինում, ապա հանգուցյալի յոթն ու այդ տոնը միասին են նշում: Շատ են կարևորում *հինգշաբթի* օրվա երեկոն, ու եթե հանգուցյալի մահվան յոթերորդ օրը համընկնում է ամսվա տասնհինգերորդ օրվա հետ, սակայն տասնչորսերորդ օրը հինգշաբթի է լինում, ուրեմն այդ օրն են գնում գերեզմաններ: Բոլոր հարազատներով հավաքվելով հանգուցյալի տանը Ղուրան են կարդում: Սենյակի մեջտեղում սեղան են դնում, վրան՝ Ղուրանը, հավլա ու այլ քաղցրեղեն: Աղոթքից հետո երկու հոգի վերցնում են սեղանն ու դուրս տանում: Այնուհետև, բոլորը լվացվում են, ու վշտի տերերին առողջություն մաղթելով՝ հեռանում:

Քառասունքի օրը աղոթքի համար օրվա ամենալավ պահը մինչև արևածագն է՝ ուրբաթ օրը կամ էլ մայրամուտը, եթե օրը հինգշաբթի է: **Գերեզմանաքար կանգնեցնելը** Այս սովորույթը տարածված է, հիմնականում, շիա մուսուլմանների շրջանում: Քարի վրա

գրվում է հանգուցյալի անունն ու ազգանունը, ծննդյան ու մահվան տարեթվերը, երբեմն նաև բանաստեղծություն կամ էլ մահվան պատճառը: Նախկինում գերեզմանաքարը դրվում էր հանգուցյալի մահվան տարեկիցի առիթով: Ներկայում այն դրվում է մինչև քառասունք կամ մինչև առաջին կրոնական տոնը: Քարը դրվում է միայն տղամարդկանց ներկայությամբ:

**Հատուկ ծիսակարգեր:** Հանգուցյալին հողին հանձնելուց հետո տուն վերադառնալով՝ կանայք Լարում հավաք են բաժանում, որպեսզի այն ուտելով մարդիկ աղոթեն հանգուցյալի համար: Մզավոր ընտանիքի անդամներն իրենց ցավակցելու եկած հյուրերին դիմավորելիս ոտքի չեն կանգնում, իսկ ճանապարհելիս էլ չեն ուղեկցում նրանց: Այս կերպ իրենց հեռու են պահում նոր դժբախտությունից: Նույնիսկ եթե իրենց հարազատներից որևէ մեկը մահանում է, բայց իրենք դեռ քառասունքի մեջ են, չեն մասնակցում հարազատի թաղմանը: Լարեստանում նորահարսին արգելվում է մասնակցել սգո արարողությանը, քանի որ, հնարավոր է, որ մահացածի քառասունքն անցնի նրան ու նա անպտուղ մնա: Եթե գերդաստանի երկու անդամները մահանում են իրար հետևից, ապա հավի խաշած ձուն փաթաթում են կանաչ կտորի մեջ ու դնում երկրորդ մահացածի կողքին ու հետո նոր թաղում, այս կերպ սատանային գայթակղում են ու տան մնացած անդամներին ազատում են մահից: Գերեզմանոցից պետք է վերադառնալ մինչև մայրամուտը, քանի որ հավատացած են, որ հոգիները արևամուտից հետո գնում են սուրբ Ալլիի մոտ: Լարում, մարդիկ շաբաթ օրերին գերեզման ու սզավոր ընտանիքին տեսակցության չեն գնում. դա վատ նշան է համարվում: Մինչև յոթ օր գերեզմանաթմբի վրա Ղուրան են կարդում ու մոմ վառում: Հիմնական սուգը տևում է երեք օր: Կանանց գերեզման գնալու արգելքը բացատրվում է նրանով, որ այնտեղ օտար շատ տղամարդիկ են թաղված, ու կարող են կանանց լացի ձայնը լսել, իսկ դա հարամ է:

### ԳՐԸԻՆ 3. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՆԻՔՆԵՐ

Լարեստանում մարդիկ յուրահատուկ հավատք են տածում շաբաթվա օրերի, առօրյա գործերի, ինչպես նաև առանձին վայրերի, ծառերի ու նույնիսկ թռչունների, որոշակի գույների ու թվերի նկատմամբ:

#### Շաբաթվա օրերը

**Շաբաթ օրը** հաջող չէ բժշկին այցելելու համար, նույնիսկ նոր դեղամիջոց չեն գնում այս օրը, որը պետք է առաջին անգամ օգտագործեն: Չի կարելի նաև առևտուր անել ու տխուր առիթների մասնակցել, քանի որ դա կշարունակվի ողջ շաբաթվա ընթացքում: Եթե մեկը մահանա շաբաթ օրը, նրա ետևից ևս երեք հոգի կմահանան: Այս օրը խուսափում են հյուր գնալ կամ ընդունել, քանի որ հավատում են, որ եթե *հյուրի ոտքը թեթև լինի*, ապա մինչև շաբաթվա վերջ հյուր կգա: Ընդհանրապես շաբաթ օրը մարդիկ խուսափում են ցանկացած տհաճ ու վատ գործերից, հակառակ դեպքում դրանք կշարունակվեն ողջ շաբաթվա ընթացքում: **Կիրակի** օրը Լարի բնակիչները տան մեջ սենյակից սենյակ, տնից տուն չեն տեղափոխվում: Այս օրը շատ հարմար են գտնում բժկի գնալու, ինչպես նաև աղոթք գնելու համար: Կիրակի և չորեքշաբթի օրերին խուսափում են ճանապարհորդելուց: Մարդիկ այս օրը հագուստ չեն լվանում, իսկ եթե մեկը հիվանդ է լինում, ապա նրան տեսակցության գնալու, ինչպես նաև աղոթք գնելու համար ամենահարմար օրը հենց կիրակին ու չորեքշաբթին են: **Երկուշաբթին** շատ գործերի իրականացման համար, ինչպիսիք են, օրինակ՝ հարսանեկան և թլպատման արարողությունները, բաղնիք գնալը, ճանապարհորդելը և այլն, ամենալավ օրն է, ինչպես և հինգշաբթին և ուրբաթը: Մաուսուլմանների համար երկուշաբթին շատ լավ օր է, քանի որ իսլամի մարգարեն այս օրն է ծնվել ու նույն՝ երկուշաբթի էլ մահացել է: Երբեմն, մարդիկ այս օրը համարում են բարի շատ գործերի իրականացման համար: Եթե **երեքշաբթի** օրը կամ **չորեքշաբթի** օրվա

գիշերը կանգնես խաչներուկին, երազանք պահես ու այդ պահին անցնող առաջին հանդիպած մարդուն լսես, կգուշակես, թե ինչ է լինելու մոտ ապագայում: Երեքշաբթի օրն ու չորեքշաբթի օրվա գիշերը թլպատման արարողություն չեն կատարում: Համարվում է, որ երեքշաբթի օրվա ծնված երեխաները հարուստ կդառնան: **Չորեքշաբթին** և **կիրակին** նպաստավոր չեն, նույնիսկ չարագույժ օրեր են տխրության առիթների մասնակցելու կամ հիվանդին այցելության գնալու համար: Այս օրերին հիվանդի որպիսիությունը չեն հարցնում նույնիսկ հեռախոսով: Գերաշի բնակիչները չորեքշաբթին վատ օր են համարում ամուսնական առաջին գիշերվա համար, որը տեղափոխում են ուրբաթ՝ այն համարելով բարի: Այս օրն ընդհանրապես կարուձև չեն անում: Լարում չորեքշաբթի օրերին թլպատման արարողությունից խուսափում են, ինչպես նաև տաք աղբյուրներ գնալուց՝ համարելով, որ այդ օրը ջիններն են այնտեղ զվարճանում: Իսկ որոշ մարդիկ խորհուրդ են տալիս չսանրվել ու վեճի մեջ չմտնել այս օրը: Մարդիկ հավատացած են, որ չորեքշաբթի օրը ծնված երեխաները չարաճճի ու աղմկոտ են լինում: **Հինգշաբթին** տարբեր գործերի համար դրական է, հարմար է տունը փոխելու, պաս պահելու և այլ բարի գործերի համար: Համոզված են, որ կեղտոտ հագուստը լավ է լվանալ հինգշաբթի օրը, որպեսզի այն չմնա ուրբաթ օրվան, ու տան բարիքը չպակասի: Այս շրջանում կան գյուղեր, որտեղ մարդիկ այս օրն են ընտրում հինա դնելու արարողության կամ աղջկա ձեռքը խնդրելու համար: Հնում ընդհանուր մաքրության ու եղունգ կտրելու համար ընտրում էին հինգշաբթի և ուրբաթ օրերը: Կտրած եղունգները թաքցնում էին պատի ձեղքերի մեջ կամ թաղում էին հողի տակ, որպեսզի հանկարծ ջինների ու ալերի ձեռքը չընկնեին ու այդպիսով դրանց տիրոջը չվնասեին: **Ուրբաթ** օրը չպերք է հյուր գնալ կամ գիշերել ուրիշի տանը, քանի որ ողջ յոթ օրվա բարիքները, որ աստված նախատեսել է տվյալ ընտանիքի համար, այդ կերպ կկորչեն կամ կանցնեն հյուրընկալող տանը: Ուրբաթ օրը պետք է տան դարպասները բաց պահել, դիմացը ջուր ցանել ու ավել, որպեսզի տան բարիքներն ավելանան: Ուրբաթ օրը հագուստ չեն լվանում, քանի որ այդ օրվա կեղտաջուրը հոսում է դեպի դրախտ: Ուրբաթ օրը, կեսօրից հետո և շաբաթ առավոտյան կարուձև չեն անում՝ համարելով վատ նշան: Ըստ Իմամ Մադեդի հրամանի, եղունգները կտրելու համար շատ լավ օր է ուրբաթը, քանի որ այդ կերպ հեռու են մնում կուրությունից, ծերությունից ու աղքատությունից, իսկ աստված մարդկանց վիշտն ու ցավը հանում է կտրված եղունգների միջոցով ու դրա փոխարեն բալլասան դնում: Լավ է ճանապարհ ընկնել ուրբաթ օրվա աղոթքից հետո: Ուրբաթ օրը մահացած մարդուն համարում են բարեգործ:

Այս տարածաշրջանում, հատուկ հավատալիքներ ու արարողություններ են արվում ոչ միայն կապված շաբաթվա օրերի հետ, այլ նաև ամսվա օրերի հատկապես լուսնային օրացույցի ամիսների: *Մոհարրամ* և *սաֆար*<sup>1</sup> ամիսների վերջին մուսուլմաններն իրականացնում են գիշերային մի արարողություն, որը կոչվում է «*Օմարի սպանություն*»: Այս գիշեր մարդիկ կծեր են իրար վրա դնում, կամ իրար կապում մի քանի դելյան, այնուհետև դրանց կանացի հագուստ են հագցնում, զարդարում ու անցնում փողոցներով, իսկ վերջում՝ դրանք այրում են, համարելով, որ այրել են Օմարի մարմինը<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Մոհարրամը և սաֆարը լուսնային օրացույցի առաջին ամիսներն են, որոնք շատ կարևոր են շիա մուսուլմանների համար, քանի որ իրենց երրորդ իմամը՝ Հուսեյնը, մոհարամ ամսին է նահատակվել, և սովորաբար այդ երկու ամիսների ընթացքում են իրականացնում սգո արարողությունները: Այդ ամիսներին ուրախության առիթներից, հիմնականում, խուսափում են:

<sup>2</sup> Օմարը սերում է Ռաշիդների դինաստիայից և երկրորդ խալիֆն է համարվում, իսկ հզորությամբ՝ բոլոր Ռաշիդներից առաջինը: Շիաները այն կարծիքին են, որ Օմարը

*Ռամադան ամսվա քանոթներորդ* օրը, որը համարվում է սուրբ Ալիին սպանող Իբն Մալջամի սպանության օրը, Լարում՝ հիմնականում շիաքանակների շրջանում, մարդիկ ոչխար են մորթում ու գլուխը եփելով՝ ուտում, սա ուրախության առիթ է, քանի որ համարում են, որ ուտում են այդ մարդասպանի գլուխը:

**Կրոնական և ազգային այլ տոներ ու արարողակարգեր**

**Սոհարրամի** տասին Իմամ Չուսեյնի նահատակության հիշատակը նշելու նպատակով՝ մարդիկ զոհաբերություն են կատարում և քանի որ այս օրը համընկնում է Չուսեյնի մահվան օրվա հետ, մինչև կեսօր պաս են պահում: Կեսօրվա արդթքով պասն ավարտվում է: Մատադի տոնի<sup>3</sup> ժամանակ գառ են զոհաբերում: Նախքան մորթելը՝ նրա աչքերին սուրմա են քսում, կանաչ կտորով զարդարում են ու բերանը մի կտոր շաքար են դնում: Գառանը տեղավորում են *դեբլեհի* ուղղությամբ, մի կում ջուր են խմեցնում ու աստծո անունը տալով՝ մորթում: Գառան ոսկորների մի մասը պահում են, որպեսզի վար ու ցանքի ժամանակ զցեն վարելահողի մեջ՝ դա համարելով առատության նշան: Որոշ գյուղերում այդ ոսկորները զցում են ցորենի ու գարու ամբարների մեջ, որպեսզի դրանք չպակասեն: Մարդիկ այն հացը, որը թխում են ռամադան ամսին, չորացնում են, որպեսզի մատադի տոնի ժամանակ արգուշթի հետ, որը ևս պատրաստվում է ոչխարի մսից, ուտեն:

**Ռամադան և հաղորդման տոն** Որոշ գյուղերում մարդիկ Ղադիրի տոնի<sup>4</sup> ժամանակ ևս պաս են պահում: Եթե այս ընթացքում հյուր են գնում, ու հյուրընկալող կողմը տեղյակ չի լինում իր հյուրի պաս պահելու մասին և նրան հյուրասիրում է ոչ պասային ուտելիքներով, ապա վերջինս չպետք է մերժի տանտիրոջ հյուրասիրությունը, սակայն տուն գալով, պետք է նորից անցնի իր պասին մինչև մայրամուտ: Ռամադանի տոնի ժամանակ ևս մինչև արդթթից վերադառնալը, ոչինչ չեն ուտում:

**Չահարշամբե սուրին** նշվում է տարվա վերջին չորեքշաբթի օրը: Լարեստանում կոտրած կծի մեջ կրակ են վառում ու հոտավետ բոյս լցնում վրան ու ծուխը տարածում են տնով մեկ: Այս կերպ մարդիկ տներից դուրս են անում չար ոգիներին ու փորձանքը, իսկ կրակով լի կոտրած կավե կուժը դուրս նետելով՝ համոզված են, որ այն իր հետ տանում է անհաջողությունը: **Նոուռուզի** առաջին օրերին Դաշթի գյուղում բոլորը անասունների եղջյուրները ներկում են կանաչ գույնով: Եթե մարդն այդ չանի, այն կդիտվի որպես տիրոջ անուշադրությունն իր ունեցվածքի հանդեպ: Կանաչով են պատում նաև տան բոլոր դռները: Հաֆթ սին<sup>5</sup> համար ներկվող հավկիթը ևս կանաչ գույնի է: Կանաչ պետք է լինի

---

դավադրությամբ է տիրացել գահին, որը իրավամբ պետք է պատկաներ Ալիին: Վերջինիս սպանելով՝ Օմարը դառնում է խալիֆ:

<sup>3</sup> Մատադի տոնը մուսուլմանների շրջանում եռանդուն կերպով նշվող տոներից է, որը նշվում է լուսնային օրացույցի գոլիաջջե, այսինքն՝ տասներկուերորդ ամսվա տասին: Այս օրերին են մուսուլմանները տանում պաշտոնական արձակուրդը՝ նշելու համար մատադի տոնը, որը տևում է մինչև չորս օր: Ընդհանրապես, այս տոնը պարտադիր չէ բոլորի համար, միայն պարտադիր է Քաաբա այցելության ու հաջի արարողության համար: Սակայն ողջ մահմեդական աշխարհն այդ օրը ոչխար կամ կով, կամ էլ ուղտ են մատաղ անում ու միսը բաժանում հարևաններին ու բարեկամներին:

<sup>4</sup> Ղադիր-ե խումը Մեդինայի և Մեքքայի մեջտեղում գտնվող բնակավայր է, որտեղ իսլամի մարգարեն իր իրավահաջորդ է նշանակում Ալիին: Չուլիաջջե ամսվա տասնուրթը համարվում է այս իրադարձության օրը, և շիա մուսուլմանների շրջանում նշվում է որպես ղադիր-ե խումի տոն:

<sup>5</sup> Հաֆթ սինը Նոուզի ժամանակ սեղանին դրվող այն յոթ սիմվոլիկ իրերն են, որոնք կարևորվում են իրանցիների կողմից որպես առատության ու բարու նշան: *Հաֆթ սին* նշանակում է *յոթ սին*՝ յոթ իրերը, որ պարսկական այբուբենի *սին* տառով են սկսվում:

նան մարդկանց հագուստը: Իսկ տարին փոխվելու ժամանակ երեխաների ձեռքի ափերին հինա են քսում ու փող դնում:

**Մյլ հավատալիքներ** Լաբեստանում հավատում են, որ, եթե տարվա կամ ամսվա սկզբին որևէ հարուստ մարդուց փող վերցնեն, կարճ ժամանակ անց իրենք էլ կհարստանան: Հավատացած են նաև, որ աշնան առաջին օրը ծառից ընկնող տերև բռնելովը ձմռանը չի հիվանդանա: Գիշերը սուլելը ջին դառնալու նշան է, իսկ եղունգ կտրելով՝ հարսանիքն ու մահը կխառնվեն իրար: Մարդիկ նաև կարևորում են մայրամուտի ժամանակ տնից դուրս չգնալը, փողոցում չկանգնելն ու բարձր չխոսելը: Մայրամուտը ոգիների ակտիվացման ժամանակահատվածն է ըստ հնագույն հավատալիքների, սրանով կարելի է բացատրել այս հավատքը: *Մաֆար* ամիսը ու հատկապես այդ ամսվա տասներեքերորդ օրը չարագուշակ են: Նույն ամսի քսանմեկին ճանապարհորդելը լավ նշան չէ: Մատաղի տունին կարուձև անելով՝ Մեքքայի հաջիների ոտըը ծակվում է, կամ նրանց ձեռքերն ու ոտքերը՝ շղթայվում:

**Թվեր** Տասնմեկ և յոթ թվերը սուրբ են համարվում՝ եթե մեկն իր կյանքի ընթացքում յոթ հանգուցյալ լողացնի ու յոթ ծնունդ ընդունի, դրախտ կընկնի: Օննդկանին ծննդաբերելուց յոթ օր հետո են բաղնիք տանում, ու յոթ օր մենակ չեն թողնում: Հուդակավորության արարողությունների մեջ էլ յոթերորդ օրը այցելելում են հանգուցյալի գերեզմանին: Լաբում հիվանդի ջերմությունն իջեցնելու համար յոթ հատ արմավ ու մեկ հատ մետաղադրամ էին դնում ունաբի ծառի տակ, որ հիվանդն առողջանար: Շիաբնակների շրջանում սգո արարողակարգում կարևորվում են մեկը, երեքը, հինգը, վեցը, յոթը, տասնհինգը և քառասունը: Տասներեք թիվը չարագուշակ է, և որպեսզի այն տանից դուրս հանեն, մարդիկ մարտի տասներեքին տներից դուրս են գնում ու բնության գրկում անցկացնում ողջ օրը: Վեցը համարվում է սատանայի թիվը: Երեխայի աչքին մինչև ինը օր սուրբ են քսում, որպեսզի աչքերի լույսը չպակասի: Եթե երկու իր է կտրվում տանըջ, հետո կտրվում է երրորդը, վտանգավոր չէ, քանի որ երեքը աստծո թիվն է՝ բարի ու լավ նշան է:

**Ուխտատեղիներ** Լաբեստանում, բնակլիմայական չոր պայմաններով՝ տեղումների սակավությամբ պայմանավորված կան հավատալիքներ՝ կապված բույսերի ու ջրամբարների հետ, որտեղ որ հիմնականում հավաքվում են խմելու ջրի պաշարները: «*Ղադանգան*»<sup>6</sup> կոչվող մի հին վայր կա լեռան բարձունքում, որտեղ քարի վրա ոտքի հետք է պատկերված: Մարդիկ այն վերագրում են սուրբ Ալիին ու այստեղ են գալիս որպես ուխտատեղի՝ իրենց նպատակների ու երազանքների իրականացման հույսով: Եթե մեկը, այստեղ գալով, իր հետ բերի աղոթքի կնիքը ու այն տեղադրի ոտքի հետքի կրունկի մասում, ու եթե կնիքը լիովին տեղավորվի կրունկի հետքի մեջ, ապա ինչ ցանկությունն որ ունի՝ կկատարվի: Ուտնատեղի մտա ջրհոր կա, որտեղ ևս մարդիկ գնում են ուխտի: Երագանք պահելով՝ դրա մեջ շաքար են գցում ու ջրի մակերևույթին առաջացած օղակներով գուշակում՝ կկատարվի երագանքը թե՛ ոչ: Քաղաքի նոր թաղամասում մի վայր կա, որը կոչվում է «*աղոթքի դերե*», այստեղ մարդիկ գնում են անձրևի ու այլ խնդրանքներով ու մտմ են վառում: Ներկայում այս վայրում մզկիթ է կառուցված:

Լաբեստանում մի հինավուրց ունաբի ծառ կա, որը ևս վաղնջական ժամանակներից վայելում է տարաշաճածանի մարդկանց սերն ու ակնածանքը և կոչվում է «*փիր քոնար*»<sup>7</sup>: Մարդիկ այստեղ են գալիս տարբեր երագանքներով, ինչպես օրինակ հողիանալու կամ ամուսնանալու: Իսկ եթե մեկի երեխաները ծնվելուց հետո մահանում են, ծառի մտա ուխտ է անում, որ եթե երեխա ունենա, յոթ տարի մազերը չի կտրի ու միայն ծառի մտա բերելուց հետո կկտրի: Երեխաների կտրված մազերը կավե փոքրիկ ամանների մեջ դրած պահում

<sup>6</sup> Նշանակում է՝ *ոտնատեղ*:

<sup>7</sup> Նշանակում է՝ հին ունաբենի

են այս ծառի տակ: Այդ երեխաներին էլ անվանում են *ունաքի ծառա* կամ *բաժին*: Այս ծառը ներկայում զարդարված է բազմագույն կտորներով, որոնք ճյուղերին են կապել ուխտավորը: Ոչ ոք չի համարձակվում կտրել ծառից մի փոքր ճյուղ անգամ: Ծառի մոտից վերադառնալով՝ ուխտավորն իր հետ նախապես տարած շաքարը կամ այլ քաղցրավենիք բաժանում է հարազատներին: Գյուղերից մեկում մի վայր կա, որտեղ գտնվում է մի էմանգադեի ձեռքի սրբապատկեր: Այստեղ մարդիկ գնում են անձրևի խնդրանքով: Մեկ այլ վայր էլ կոչվում է «*քաքա Մուլեյման*»<sup>8</sup>, ու պատմում են, որ մի կին այստեղ է գնացել հղիանալու ուխտով ու նրա երագանքը կատարվել է:

**Օտաեր ու բույսեր** Իսլամում արմավենին սուրբ Ալլիի դրածոն է երկրի վրա: Այն տներում, որտեղ տղա երեխա է ծնվում, արմավենի են տնկում, որպեսզի բարօրությունն ու առատությունը տնից չպակասեն: Այս հավատի ներքո, եթե հույժ կարևոր է արմավենին կտրելը, նախ ոչխար են մատաղ անում, հավատալով, որ ոչխարի արյունը թափելով կանխում են մարդու արյան թափվելը: Արմավենին համարվում է նաև մարդու արմատը: Եթե ծառը կտրում են, դրա տեղը պարտադիր մի ուրիշն են տնկում: Մա առավելապես վերաբերվում է ունաքի ծառին, քանզի հավատացած են, որ կտրված ունաքի ծառի փոխարեն մի ուրիշը չտնկելով՝ մարդ կմահանա: Այստեղ բազմաթիվ ունաքի ծառերի վրա ուխտավորները կտորներ են կապել՝ որպես իրենց երագանքների իրականացման համար կատարվող նշան: Շատ իմամգադեների դամբարանների մոտ հանդիպում են ունաքի ծառեր: Մարդիկ հավատացած են, որ հինան օգնում է մագաթափությունը կանխել, իսկ դամասկոսյան վարդը Մոհամադի քրտինքն է, որ կաթել է գետնին ու դարձել ծաղիկ:

**Թռչուններ ու կենդանիներ** Կան մի շարք թռչուններ, որոնց որսն արգելված է: Դրանցից է կկուն, որն ըստ ժողովրդական հավատալիքների, ժառանգության համար վիճել է եղբոր հետ, ապա զոջացել է ու շարունակ նրան է կանչում: Մյուսը հուպոպն է, որին անվանում են նաև «*քաքա Մուլեյման*» ու համարում են սուրբ Մուլեյմանի նամակատարը: Մեկ այլ թռչուն կոչվում է *սերմնացուն*, իսկ երբեմն էլ՝ *անձրևի հալի*: Մա երկնագույն է կամ կարմիր, հայտնվում է տեղումնառատ տարիներին՝ իր գույգի հետ: Մարդիկ հավատում են, որ, եթե սոխակը հանկարծակի սկսի երգել ծառի վրա, ապա հյուր կգա: Եթե սոխակը մտնի տուն ու սկսի երգել բարձրաձայն, շատ շուտով հյուր կգա, իսկ եթե հանգիստ է երգում, ասում են, որ հյուրը կուշանա, չի շտապում: Անձրևի թռչունի՝ երկնքում ճախրելը ևս կարևոր հյուրի ժամանման մասին է ավետում: Թիթեռը ևս լավ նշան է ու ճամփորդից լուր ստանալու մասին է գուշակում, իսկ նրա ճախրելը մեկի շուրջը վկայում է սիրեցյալի գալու մասին: Եթե թիթեռը պտտվի մեկի գլխի շուրջ, վերջինս ճամփորդելու կգնա որևէ ուխտատեղի: Տանը աղավկի ունենալը բարօրության նշան է: Եթե մեկը շատ է չարչարվում ու անօգուտ է, ապա նրան համեմատում են ճնճղուկի հետ: Քիչ ուտելու դեպքում ևս կիրառում են միննույն արտահայտությունը: Միայն որք երեխան կարող է ճնճղուկի գլուխ ուտել, հայր ունեցողների ուտելու դեպքում՝ կորբանան:

Եթե արադաքը մայրամուտին կանչի, վատ նշան է, նրան մորթում են, իսկ եթե հավը տան դիմաց թափահարի թևերը, ապա հյուր ներս կմտնի: Եթե աղջիկ երեխա ունեցած կնոջը սև հավի միա տան, հաջորդ երեխան տղա կլինի: Երեխայի խոսքի ուշացման կամ վատ խոսելու դեպքում նրան աղավնու ձու են տալիս, որպեսզի կարգավորվի խնդիրը: Մարդիկ նաև հավատում են, որ սիրամարգի փետուրը Ղուրանի մեջ դնելիս աճում, երկարում է: Գորտի տուն մտնելը ևս լավ նշան է համարվում: Եթե ճաշելիս շունը նայում է մարդուն երեսին, ապա պետք է անպայման նրան էլ ինչ-որ բան տալ, իսկ, եթե շան ձագը մարդուն կծի, վերջինս սովամահ կլինի: Երագում շուն տեսնելը կովի նշան է, իսկ տան անկյունում շան կաղկանձը տվյալ տան անդամներից մեկի մահն է գուժում:

---

<sup>8</sup> Նշանակում է *Մուլեյման եղբայր*

Ճանապարհորդության սկզբում փողոցի աջ կողմում աղվեսի հայտնվելը լավ նշան է, իսկ եթե նա հակառակ կողմում է, ճամփորդությունն անօգուտ է: Եթե մեկը ճամփորդության գնալիս ստիպված լինի անցնել ոչխարների ու այծերի հոտի միջով, նպատակակետին չի հասնի: Եթե ընտանի կենդանին արտավայրից չի վերադառնում տուն, մի դանակ են տանում հարևանի տուն, որպեսզի վերջինս աղոթի ու կապի այն գազաններին, որոնք կարող են վնասել ընտանի կենդանուն: Այդ կերպ կապվում է գազանների բերանը ու նրանք չեն կարողանում ուտել կորած կենդանուն: Շնագայլի հաջորդ արևելքից լսվելիս, առատության ու ծաղկման նշան է:

Լարում հավատացած են, որ կատվի վրա ջուր լցնելով՝ ձեռքերին բշտիկներ կառաջանան, իսկ քար նետելով՝ կանիծվեն կատվի կողմից: Ոմանք հավատում են, որ տնից դուրս գալիս սև կատվի հանդիպելը վատ նշան է: Սև կատվին ջին են համարում ու կարծում են, որ նրան հասցրած վնասը կշրջվի մարդու դեմ: Դրանից խուսափելու համար պետք է տալ Ալլահի անունը: Եթե սև կատուն մարդու առջևից է գնում, լավ նշան է, իսկ հետևից վազելով՝ նրանից տանում է բոլոր բարի ու դրական երևույթները:

